

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ  
4 դեկտեմբերի 2008 թ. N 02-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ  
ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և 35.2-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 18-ի «Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատելու մասին» N 16-Ն հրամանը:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵՁԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ  
ԿԱԴՐԵՐԻ ՌԵՁԵՐՎԻՑ ՀԱՆՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են համայնքային ծառայության կադրերի ռեզերվում (այսուհետ՝ Կադրերի ռեզերվ) գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. Կադրերի ռեզերվը՝ համայնքային ծառայության պաշտոններ չգրադեցնող՝ «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 1-ին մասում նշված անձանց հանրույթն է:

3. Կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը մեկ տարի է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

4. Կադրերի ռեզերվում գրանցվում են՝

ա) համայնքի ղեկավարի կամ համայնքի ղեկավարի տեղակալի, խորհրդակցականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի պաշտոններ զբաղեցրած անձինք՝ պաշտոնավարման ավարտից հետո.

բ) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում Օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք.

գ) հաստիքների կրճատման, ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը), համապատասխան մարմնի լուծարման հիմքերով համայնքային ծառայության պաշտոնից ազատված անձինք:

5. Կադրերի ռեզերվում գրանցվելու համար սույն կարգի 4-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում կադրերի ռեզերվում գրանցման ենթակա անձն այդ հիմքի ի հայտ գալու օրվանից հետո աշխատանքային 5 օրվա ընթացքում դիմում է համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմ՝ (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ) (այսուհետ՝ աշխատակազմ) ներկայացնելով դիմում, իր կողմից լրացված՝ համայնքային ծառայողի համար նախատեսված անձնական թերթիկ, անձնագրի, կրթությունը հավաստող փաստաթղթի և աշխատանքային գրքույկի պատճենները, իր հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալներ (հեռախոսահամար, փաստացի բնակության վայրի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն և այլն), ինչպես նաև երկու լուսանկար: Համապատասխան աշխատակազմի քարտուղարը նշված փաստաթղթերը ստանալուց հետո աշխատանքային 5 օրվա ընթացքում դրանք ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին, իսկ սույն կարգի 4-րդ կետի

«բ» ենթակետով նախատեսված դեպքում՝ այդ փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ մրցութային հանձնաժողովի եզրակացության պատճենը:

6. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված որևէ հիմքի առկայության դեպքում և սույն կարգի 5-րդ կետով սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն ընդունում է համապատասխան վարչական ակտ՝ անձին կադրերի ռեզերվում գրանցելու մասին:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված վարչական ակտն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում լրացվում է գրանցման թերթիկ (համաձայն ձևի): Գրանցման թերթիկը լրացվում է մեկ օրինակից, որը տրամադրվում է կադրերի ռեզերվում գրանցված անձին, իսկ դրա պատճենը պահվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում:

8. Կադրերի ռեզերվում գրանցված անձի վերաբերյալ տվյալներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում վարվող հաշվառման մատյանում:

9. Կադրերի ռեզերվից անձին հանելու հիմքերն են՝

ա) անձնական դիմումը.

բ) սույն կարգի խախտմամբ կադրերի ռեզերվում գրանցվելը.

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը կամ փախստականի կարգավիճակը կորցնելը՝ առանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման.

դ) օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ե) դատական կարգով անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելը.

զ) դատական կարգով համայնքային և (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

է) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը, ինչը համայնքային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել համայնքային ծառայողի ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը.

ը) կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրանալը.

թ) 65 տարին լրանալը.

ժ) ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը.

ժա) Օրենքով սահմանված այլ հիմքերը:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված հիմքերի ի հայտ գալուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կառավարման

մարմինն ընդունում է համապատասխան վարչական ակտ՝ անձին կադրերի ռեզերվից հանելու մասին:

11. Կադրերի ռեզերվում գրանցված անձը համարվում է կադրերի ռեզերվից հանված՝ նրա մահվան կապակցությամբ:

<p>լուսանկարի տեղը</p>	<p>Հավելված Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգի</p>
<p><b>ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ № _____</b></p> <p>(համայնքային ծառայության կադրերի ռեզերվի)</p>	
1. Ազգանունը, անունը, հայրանունը _____	
2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը _____	
3. Անձնագիրը _____ (սերիան, համարը, ում կողմից է տրվել և տրման ամսաթիվը)	
4. Ձբաղեցրած վերջին պաշտոնը _____ (պաշտոնի անվանումը, ծածկագիրը)	
5. Համայնքային ծառայության դասային աստիճանը _____	
6. Կադրերի ռեզերվում գրանցելու հիմքը _____	
7. Կադրերի ռեզերվում գրանցելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի վարչական ակտը _____ _____	
8. Կադրերի ռեզերվում գրանցման ժամանակաշրջանը	
"-----"-----թ-ից մինչև "-----"-----թ.	
..... աշխատակազմի ղեկավար	
Կ. Տ.	----- ստորագրությունը
" ____ " _____ 200 ____թ.	
<p>Կադրերի ռեզերվում գրանցված տվյալ անձի գրանցման ժամանակաշրջանն ավարտվում է սիանգանյա գտնվելու առավելագույն ժամկետից շուտ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում:</p>	